შეფასებისა და გამოცდების
ეროვნული ცენტრი



# Ընդհանուր ունակությունների թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու՝ <u>բանավոր</u> և <u>մաթեմատիկական</u> մասերից:

Յուրաքանչյուր մասը պարունակում է 40 առաջադրանք: Ամեն մի առաջադրանքին կցված է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

**Թեստի յուրաքանչյուր մասի վրա աշխատելու համար տրվում է 1 ժամ և 35 րոպե:**

Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք պատասխանը:

**Թեստի առավելագույն միավորն է 80:**

**Մաղթում ենք հաջողություն:**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք գործածել ստեղնաշարի կոճակները:

# Բանավոր մաս

# Տրամաբանություն

*Այս տեսքի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրե՛ք հատկապես հարցին, որն ուղեկցում է յուրաքանչյուր առաջադրանքին, և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:*

*Որոշ հարցերին պատասխանելը կհեշտացնի տվյալների պատկերումը գծագրի կամ դիագրամի ձևով:*

**1.** Տրված են դրույթներ.

- Որոշ տներ փայտանյութից են կառուցված:
- Ոչ մի շինություն, որը փայտանյութից է կառուցված, կղմինդրով չի ծածկված:

*Ստորև թվարկածներից ո՞ր դրույթը կլինի* ***<u>անպայման ճշմարիտ,</u>*** *եթե տրված դրույթները ճշմարիտ են:*

ա) Կղմինդրով ծածկված որոշ շինություն տուն է:

բ) Որոշ տուն կղմինդրով չի ծածկված:

գ) Կղմինդրով ծածկված որոշ շինություն փայտանյութից է:

դ) Բոլոր տները կղմինդրով են ծածկված:

ե) Կղմինդրով ծածկված բոլոր շինությունները տուն են:

**2.** Քարտեզի վրա չորս  տարբեր գույներով՝ կարմիր, դեղին, կապույտ և կանաչ, նշված են Վրաստանի չորս անկյուններ՝ Գուրիա, Կախեթի, Իմերեթի և Սամեգրելո:  Մեկ գույնով՝ մեկ անկյուն:

Տրված է.

- Դեղին գույնով նշված չեն ո՛չ Գուրիան և ո՛չ էլ Սամեգրելոն:
- Կարմիր գույնով նշված է Իմերեթին:

*Ստորև թվարկածներից ո՞րն է* ***անհնար:***

ա) Գուրիան  նշված է  կանաչ գույնով:

բ) Սամեգրելոն նշված է կանաչ գույնով:

գ) Սամեգրելոն նշված է  կապույտ գույնով:

դ) Կախեթին նշված է  կապույտ գույնով:

ե) Կախեթին նշված է դեղին գույնով:

**3.** Տրված է երկխոսություն.

**Էլենե.** - Համակարգչային խաղերի մեծ մասը վնասակար է երեխայի զարգացման համար, քանի որ դրանք խրախուսում են բռնությունը, և այդ վնասը շատ ավելի նշանակալից է, քան այն օգտակարը, որը զվարճանալու տեսակետից երեխան կարող է ստանալ նման խաղերից:

**Զազա**- Համամիտ չեմ ձեզ հետ, ես կարծում եմ, որ համակարգչային խաղերը զարգացնում են շրջահայեցությունը, տրամաբանական մտածողությունը և նաև ուրախալի են երեխաների համար:

*Թվարկածներից ո՞ր կարծիքի հետ են երկուսն էլ* ***համաձայն:***

ա) Համակարգչային խաղերի միջոցով երեխաները սովորում են ագրեսիվ վարքագիծ:

բ) Որոշ համակարգչային խաղեր վնասակար են երեխայի համար:

գ) Բոլոր համակարգչային խաղեր զարգացնում են մտածողությունը:

դ) Ոչ մի համակարգչային խաղ օգտակար չէ:

ե) Որոշ համակարգչային խաղեր զվարճացնում են երեխային:

**4.** Տրված է.

- Լեռներում որոշ գետեր շատ արագահոս  են:
- Բոլոր արագահոս գետերում, որոնք հոսում են լեռներից, ջուրը շատ սառն է:
- Լեռներում բոլոր գետերի ափին մոշ է աճում:

*Ստորև թվարկածներից  ո՞րն է **բխում** այս դրույթներից:*

ա) Բոլոր շատ արագահոս գետերի ափին մոշ է աճում:

բ) Լեռներում որոշ գետեր արագահոս չեն:

գ) Լեռներում որոշ գետերի ջուրը շատ սառը չէ:

դ) Որոշ գետերում, որոնց ափերին մոշ է աճում, ջուրը շատ սառն է:

ե) Բոլոր շատ արագահոս գետեր, որոնցում ջուրը շատ սառն է, հոսում են լեռներից:

**5**. Նոր մոդելի համաձայն, նկարիչները որոշակի գումարի դիմաց թույլ են տալիս իրենց աշխատանքները ցուցադրել առցանց պատկերասրահներում, որոնք ապահովում են գնորդի հասանելիությունը՝ տեսնելու մեծ թվով աշխատանքներ: Որոշ նկարիչներ, ովքեր երկար տարիների ընթացքում վաճառում են իրենց աշխատանքները, դժգոհ են նոր մոդելից, քանի որ նրանց աշխատանքների գինը նվազել է: Մշակույթի պարագլուխները եզրակացրին. **Չնայած դրան, նկարիչները ընդհանուր առմամբ նոր մոդելով ավելի շատ գումար են վաստակում, քան նախկինում:**

Թվարկածներից ո՞րն է **ամենից ավելի ամրապնդում** տրված եզրակացության **իրավացիությունը:**

ա) Նոր մոդելի համաձայն, պատկերասրահների սեփականատերերը յուրաքանչյուր աշխատանքի համար ավելի քիչ են վճարում, ինչը նկարիչներին ավելի քիչ եկամուտ է բերում:

բ) Որոշ նկարիչներ ցանկանում են ավելի շատ գումար վաստակել, քան վաստակում էին հին մոդելի համաձայն:

գ) Նոր մոդելի շնորհիվ նկարիչները ավելի շատ գործեր են վաճառում, քան հին մոդելով:

դ) Հին մոդելը այժմ էլ կարելի է կիրառել և ավելի շատ եկամուտ կբերի նկարիչներին, քան նոր մոդելը:

ե) Նոր մոդելի օգնությամբ վաճառքներին կցված են հարկեր, ինչը վերջին հաշվով նկարիչներից ավելի շատ ծախս է պահանջում:

# Նախադասությունների լրացում

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծիկներով: Մի գծիկը երբեմն մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ է նշանակում:*

*Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից շեղ (/) գծիկներով են սահմանազատված: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հաջորդաբար տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում, կստացվի իմաստով արդարացված նախադասություն:*

6. Կարող է ______ թվալ, բայց չափազանց հոգատարությունը երեխային ոչ թե ______: Նրա մոտ ______ իմունային համակարգը և ______ շրջապատում գոյություն ունեցող մարտահրավերներին դիմակայելու ունակություն:

ա) պարադոքսալ / պաշտպանում, այլ վնաս է հասցնում / թուլանում է / չի մշակվում
բ) օրինաչափ / պաշտպանում, այլ վնաս է հասցնում / ձևավորվում է ուժեղ / չի մշակվում
գ) պարադոքսալ / վնաս է հասցնում, այլ պաշտպանում է / թուլանում է / մշակվում է
դ) օրինաչափ / պաշտպանում, այլ վնաս է հասցնում / ձևավորվում է ուժեղ / մշակվում է

**7.** Շատ այլ _____, որոնք միայնակ են որս անում, գայլը հաջողակ որսորդ  միայն _____ որսի շնորհիվ է դառնում, ինչը որսի ժամանակ  _____  է ենթադրում:

ա) գիտատիչների  տարբերությամբ / խմբային  / գործառույթների բաշխում
բ) գիշատիչների նմանությամբ / խմբային / անկախ գործել
գ) գիշատիչների նմանությամբ  / միայնակ / համատեղ գործողություն
դ) գիշատիչների տարբերությամբ  / միայնակ  / ցեղակիցների ակտիվություն

**8.** Այն բանի հավանականությունը, որ դուք կդրսևորեք այս կամ այն վարքագիծը, պայմանավորված է առաջադրված նպատակին հասնելու սպասումով և նրանով, թե ինչ նշանակություն ունի այդ նպատակը ձեզ համար: ——— , որոշակի նպատակի հասնելու համար գործողության հավանականությունը այն դեպքում է ամենա ——— , երբ այն ——— եք համարում, ——— , անհատապես ——— :

ա) Չնայած դրան / բարձրը / նվազ իրատեսական / թեև / պակաս արժեքավոր է մեզ համար
բ) Չնայած դրան / ցածրը / միանգամայն ոչիրատեսական / և, դրա հետ միասին / պակաս արժեքավոր է մեզ համար
գ) Համապատասխանաբար / բարձրը / իրատեսական / և դրա հետ միասին / անչափ արժեքավոր է մեզ համար
դ) Համապատասխանաբար / ցածրը / միանգամայն ոչիրատեսական / թեև / անչափ արժեքավոր է մեզ համար

**9.** ——— մեթոդ, որին անվերապահորեն կարելի է վերագրել համընդհանուր կրթական-դաստիարակչական արժեք – ——— զարգացման կոնկրետ աստիճանը, որի վրա գտնվում է սովորողը: Նույն բանը ——— հավասարաչափ արդյունավետ ուսուցման ——— փուլերում:

ա) Գոյություն չունի / ոչ մի մեթոդի համար էական չէ / չի կարող լինել /բոլոր
բ) Գոյություն չունի / անպայմանորեն պետք է հաշվի առնենք / չի կարող լինել / բոլոր
գ) Գոյություն ունի / վճռական նշանակություն ունի / կարող է լինել / տարբեր
դ) Գոյություն ունի / ոչ մի մեթոդի համար կարևոր չէ / չի կարող լինել / տարբեր

## Ընթերցած տեքստի  վերաիմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերաիմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին պատասխանելու համար հնարավոր է անհրաժեշտ լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմելով»:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

I 20-րդ դարի 60-ական թվականներին **լամանտինները** գրեթե վերացան Ֆլորիդայից: Այդ ծովային խոտակեր կաթնասունները հազվադեպ էին նկատվում: Լամանտինները ներկայացնում են կենդանական աշխարհի անոմալիան*: Նրանք ո՛չ իրենք են հափշտակում և ո՛չ էլ ուրիշների ատամի տակ են ընկնում: Այս խաղաղասեր կենդանիների մոտ, որոնք կարող են աճել մինչև 4 մետր և կշռում են 900 կիլոգրամից ավելի, էվոլյուցիայի ընթացքում ագրեսիա չի զարգացել:

II 20-րդ դարի 60-ական թվականներին Ֆլորիդայի առափնյակում լամանտինների թիվը հաշվվում էր մոտ հազար առանձնյակ, իսկ այսօր դրանց թիվը հասել է շուրջ 7500-ի: **Քրիստալ Ռիվերը** (քաղաք Ֆլորիդայում) լամանտինների գոյատևման էպիկենտրոնն է: Ֆլորիդայի 22 միլիոն բնակչության երեք քառորդը ապրում է առափնյա գոտու երկայնքով, լամանտինների գլխավոր բնակավայրում՝ հաբիթաթում, որտեղ ջուրը աղտոտված է կենցաղային թափոններով, շինանյութերով և արոտավայրերից քշված-բերված պարարտանյութերով: Ոչնչացվեց նաև ծովախոտը, որը լամանտինների հիմնական սննդի աղբյուրն է: Պոպուլյացիայի աճը հնարավոր դարձավ լամանտինների բնակավայրի՝ հաբիթաթի վերականգնման, դրանց մասին տեղեկատվության տարածման և այն կանոնների կիրառման արդյունքում, որոնք ապահովում էին նավակների բախումների դեպքերի կանխումը: Հետազոտողների գնահատումներով, Ֆլորիդայի հասունացած լամանտինների 96%-ին՝ իրենց 40-ամյա միջին կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ շոգենավ է հարվածել:

III 1978 թվականին Ֆլորիդայի նահանգը հայտարարվեց «լամանտինների ապաստարան և արգելանոց» և համապատասխան ակտի հիման վրա նավակներին սահմանվեց արագության սահմանափակում տաք ջրերի ձմեռային ապաստարաններում: National Geographic-ի հետազոտողների կողմից հայթայթված տեղեկատվությունը դրվեց Ֆլորիդայում լամանտինների պահպանության շարժման հիմքում: Այն գլխավորում էր «Լամանտինների գոյատևման ակումբը»: Տարբեր խմբեր իրականացնում էին դատավարություններ այս կենդանու և նրա հաբիթաթի պահպանության կարգավորումը խստացնելու համար: Իսկ 2011 թվականից ի վեր Քրիստալ-Ռիվերում նավակներից պահանջվում էր միշտ երթևեկել ցածր արագությամբ: Այս քարիզմատիկ կենդանիները դարձան բևեռացման պատճառ: Մի կողմում դրանց պաշտպաններն են, իսկ մյուս կողմում՝ կառուցապատողները, բիզնես շահերը և նավարկության երկրպագուները, ովքեր ցանկանում են առանց սահմանափակումների տեղաշարժվել Ֆլորիդայի ջրերում: Այս հակամարտությունը հայտնի դարձավ **«Լամանտինների պատերազմներ»** անունով:

**Անցնել հարցերին.** 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

IV Հաբիթաթի պաշտպանության և նավակների արագության սահմանափակումների արդյունքում լամանտիների պոպուլյացիան աճեց, բայց առջևում սպասում էին նաև այլ սպառնալիքներ. շրջակա միջավայրի փոփոխություն, ջրի ծաղկում, կլիմայի փոփոխում, ընդլայնվող շինարարություն և դրա ազդեցությունը առափնյակի վրա: Այս բնապահպանական խնդիրների վերահսկումը շատ ավելի բարդ է: Ինդիան-Ռիվերի (գետ Ֆլորիդայում) **ծովալճակում** 2011-2019 թվականներին վերացավ ծովային խոտը, որոշ տեղերում ավելի քան 90%-ով: 2010 թվականի անսովոր ցուրտ ձմեռը հարյուրավոր լամանտիների կյանք խլեց: Հաջորդ տարիներին ջերմաստիճանը բարձրացավ և լամանտիների սննդի համար ոչպիտանի միկրոջրիմուռները անչափ շատացան: Դրանք այնպես էին բազմանում և հաստ գորգի նման ծածկում ջուրը, որ արևի ճառագայթները չէին հասնում ջրի հատակ, մինչև ծովախոտը: Լամանտիների օազիսը վերածվեց ճահճի:

V Առափնյակի բնակիչները ձեռնամուխ եղան միկրոջրիմուռներից գետի մաքրմանը, ռեյնջերները՝ բնապահպանական կամավորները սկսեցին ջրի մեջ մեծ քանակությամբ ծովախոտ լցնել՝ լամանտիներին կերակրելու համար (մեկ լամանտին օրական ուտում է 45 կգ ծովախոտ): Այնուհետև, Քրիստալ–Ռիվերի փրկության կազմակերպության նախաձեռնությամբ սկսեցին ծովային խոտի՝ **վալիսներիայի** (ջրասույզ) տնկումը: 350 000 վալիսներիայի տնկիներ ձեռքով տնկելուց հետո նրանք գետը կրկին վերածեցին էկոհամակարգի, որտեղ միկրոջրիմուռները այլևս գերիշխող չէին: Քրիստալ-Ռիվերում միայն ձմեռային ամիսներն անցկացնելու և այնուհետև Մեքսիկական ծոցի «արոտավայրեր» մեկնելու փոխարեն լամանտիներն այժմ ամբողջ տարին այստեղ են մնում, լավ սնվում են և նաև աշխուժացնում են քաղաքի զբոսաշրջությունը:

*Անոմալիա – օրինաչափության խախտում, ընդհանուր կանոնակարգից, նորմայից շեղում:

**Անցնել հարցերին.** 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**10**. Ինչո՞ւ են լամանտիները ներկայացնում  կենդանական աշխարհի **անոմալիան:**

ա) Լամանտիները խաղաղասեր  կենդանիներ են:

բ) Լամանտիներն աճում են մինչև 4 մետր և կշռում են ավելի քան 900 կգ:

գ) Լամանտիները ո՛չ հափշտակիչներ են, ո՛չ էլ այլ գիշատիչի զոհ:

դ) Լամանտիների մոտ էվոլյուցիայի ընթացքում զարգացավ այլ կենդանիների նկատմամբ ագրեսիա:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**11.** Ի՞նչ նպատակով է II պարբերությունում ընդգծված Ֆլորիդայի բնակչության թվաքանակը:

ա) Ֆլորիդայի առափնյա գոտին խիտ բնակեցված է, և մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա զգալիորեն վնասում է լամանտինների հաբիթաթը:

բ) Ֆլորիդայի առափնյակում շինանյութերի թափոնների չափից ավելի քանակի պատճառով ոչնչացավ լամանտինների հիմնական սնունդը՝ ծովախոտը:

գ) Ֆլորիդայի առափնյա գոտու 22 միլիոնանոց բնակչությունը ընդգրկվեց լամանտինների հաբիթաթը վերականգնելու և կենցաղային աղբից պաշտպանելու գործում:

դ) Ֆլորիդան առափնյակում կանոնակարգեր մտցրեց, որոնք ապահովում են նավակի բախումների դեպքերի կանխումը:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

**12.** Ստորև թվարկածներից ո՞րը **<u>արդարացված չէ</u>**:

**«Լամանտինների պատերազմներ»** անունով կոչվեց հակադրությունը՝

ա) կառուցապատողների և նավարկության սիրահարների միջև, ովքեր Ֆլորիդայի ջրերում անսահմանափակ լողալու ցանկություն ունեին:
բ) նավագնացության բիզնեսի և այն մասնագետների միջև, ովքեր Ֆլորիդա նահանգը հայտարարեցին լամանտինների ապաստարան և արգելանոց:
գ) շինարարական բիզնեսի և այն խմբերի միջև, որոնք աջակցում էին լամանտինների հաբիթաթի պաշտպանության ավելի խստացնող կանոնակարգերին:
դ) պահպանողական - կենսաբանների և այն խմբերի միջև, ովքեր դատական հայցեր էին ներկայացնում բիզնեսի շահերը պաշտպանելու համար:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**13.** Ինչո՞ւ լամանտինների օազիսը վերածվեց ճահճի:

ա) 2010 թվականին Ֆլորիդայի ափին անսովոր ցուրտ ձմեռ եղավ, և հարյուրավոր լամանտիններ ոչնչացան:

բ) Լամանտինների հաբիթաթը փոխվեց, քաղաքի աճող զարգացումը ազդեցություն գործեց ծովալճակի էկոհամակարգի վրա:

գ) 2010 թվականի ձմռանը հաջորդեց ջերմաստիճանի բարձրացում և ծովախոտը անսովոր բազմացավ:

դ) Միկրոջրիմուռները զորգի պես ծածկեցին ջուրը, և արևի լույսը այլևս չէր կարող հասնել ծովախոտերին:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

**14.** Ծանոթացեք տեղեկատվությանը. **«Ինչը մարդկանց համար մատնահետք է, նույնը լամանտինների համար սպի է»,** - ասում է «Լամանտինների գոյատևման ակումբի» անդամ Ուեյն Հարթլին և ցույց է տալիս լուսանկար: Այն պատկերում է լամանտին, որի պոչը վնասել է նավակի պրոպելերը՝ պտուտակը:

*Ինչի՞ մասին կարող են ակնարկել Ուեյն Հարթլիի խոսքերը:*

ա) Լամանտիններին ավելի շատ վնասում են նավերի, քան թե մեծ շոգենավերի հետ բախումները:
բ) Յուրաքանչյուր առանձնյակի սպիները առաջացել են «Լամանտինների պատերազմների» հետևանքով:
գ) Լամանտիններին ուսումնասիրող կենսաբանները առանձնյակներին տարբերակում են նրանց սպիներով:
դ) «Լամանտինների գոյատևման ակումբը» կանոնակարգեր է սահմանում բախումները կանխելու համար:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**15.** Ի՞նչը աջակցեց վերականգնելու լամանտինների պոպուլյացիան Ինդիան - Ռիվերի ծովալճակում:

ա) Ռեյնջերները վերահսկում էին ծովալճակում նավակների տեղաշարժի արագությունը:
բ) Լամանտինները ձմեռային ամիսներն անց էին կացնում Մեքսիկական ծոցի «արոտավայրերում»:
գ) Ստեղծեցին այնպիսի էկոհամակարգ, որտեղ գերակշռում էին միկրոջրիմուռները:
դ) Գետը մաքրեցին միկրոջրիմուռներից և տնկեցին բազմաթիվ վալիսներիա:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

# Համանուններ

*Համանունների տեսակի ստորև տրված առաջադրանքներում կիրառված բառերից մի քանիսը հանդիպում են տեքստում (նման դեպքում բառի կողքին նշված է համապատասխան պարբերությունը)։ Ուշադրությամբ ընթերցե՛ք, ինչ է պահանջվում յուրաքանչյուր առաջադրանքում և դրանից հետո միայն ընտրեք արդարացված պատասխանը։ Առաջադրանքը ճիշտ կատարելու գործում կարող է օգնել տեքստը։*

**16.** Ստորև թվարկածներից ո՞ր զույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին **<u>գիշատիչ : խաղաղասեր</u>** բառերի զույգում է:

ա) Փշատերև : մշտադալար
բ) Առափնյա : վերահսկվող
գ) Պղտորված : զուլալ
դ) Մեծահասակ : կաթնասուն
ե) Կլիմայական : հարմարված

[Վերադարձ տեքստի I էջին](#)
[Վերադարձ տեքստի II էջին](#)

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**17**. Ստորև թվարկածներից ո՞ր զույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին **Էպիկենտրոն : ծայրամաս** բառերի զույգում է:

ա) Հրապարակ : զբոսայգի

բ) Այգի : գազոն

գ) Կորտեր : ցանց

դ) Շախմատ : տախտակ

ե) Բեմ : կուլիսներ


Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**18.** Ստորև թվարկածներից ո՞ր զույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին **<u>վալիսներիա : խոտ</u>** բառային զույգում է:

ա) Մայրուղի : արահետ

բ) Ամսագիր : հոդված

գ) Աֆիշ : հայտարարություն

դ) Աշտարակ : պալատ

ե) Ձեռնահարկ : նկուղ

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**19.** Ստորև թվարկածներից ո՞ր զույգում է նույնպիսի հարաբերակցություն, ինչպիսին **հակադրություն : հակամարտություն** բառային զույգում է:

ա) Համաձայնություն : կոնսենսուս

բ) Պայմանագիր : զինադադար

գ) Զիջում : անհամաձայնություն

դ) Հարձակում : ռազմավարություն

ե) Հետախուզություն : տեղեկատվություն

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**20.** Տեքստից բերված են հետևյալ նախադասությունները՝

I. Լամանտիների օազիսը վերածվեց ճահճի:

II. Լամանտիները աշխուժացրին նաև քաղաքի զբոսաշրջությունը:

III. Ջերմաստիճանը բարձրացավ և միկրոօրգանիզմները անչափ բազմացան:

*Այս նախադասություններից որո՞նք են պարունակում* ***փոխաբերական*** *արտահայտություն:*

ա) Միայն I-ում

բ) I և II-ում

գ) Միայն II-ում

դ) II և III-ում

ե) Միայն III-ում

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

## Տրամաբանություն

*Այս տիպի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կատարվելիք եզրակացությունների տեսանկյունից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրե՛ք հատկապես հարցին, որն ուղեկցում է յուրաքանչյուր առաջադրանքին, և տրված տարբերակներից ընտրե՛ք համապատասխան պատասխանը:*

*Որոշ հարցերին պատասխանելը կհեշտացնի տվյալների պատկերումը գծագրի կամ դիագրամի ձևով:*

**21**. Տրված է դրույթ.

Իտալիայի թանգարաններում ցուցադրվում են միայն բնօրինակ աշխատանքներ։

*Ստորև թվարկածներից ո՞րն է* ***hակադրվում*** *այս դրույթին.*

ա) Ուֆֆիցի պատկերասրահում ցուցադրված են բնօրինակ աշխատանքներ և այն Իտալիայի թանգարան է։

բ) Ուֆֆիցի պատկերասրահում ցուցադրված են բնօրինակ աշխատանքների պատճեններ և այն Իտալիայի թանգարան է։

գ) Ուֆֆիցի պատկերասրահում ցուցադրված են բնօրինակ աշխատանքներ և այն Իտալիայի թանգարան չէ։

դ) Ուֆֆիցի պատկերասրահում ցուցադրված են բնօրինակ աշխատանքների պատճեններ և այն Իտալիայի թանգարան չէ։

ե) Ուֆֆիցի պատկերասրահում ցուցադրված չեն բնօրինակ աշխատանքների պատճեններ և այն Իտալիայի թանգարան չէ։

**22.** Նիկան պատրաստվում է արշավի գնալ  և հետը տանելու համար առանձնացրեց  չորս իր. վրան, լապտեր, գլխարկ և անձրևանոց:

- Եթե վրան տանի, ապա լապտեր նույնպես պետք է  տանի:
- Եթե լապտեր  տանի, անձրևանոց նույնպես պետք է  տանի:
- Եթե գլխարկ տանի, ապա անձրևանոց նույնպես պետք է  տանի:

Նիկան արշավի գնալիս միայն մեկ իր տարավ հետը:

*Ո՞ր իրը տարավ Նիկան արշավի գնալիս:*

ա) Գլխարկ:
բ) Վրան:
գ) Լապտեր:
դ) Անձրևանոց:
ե) Կա՛մ վրան, կամ լապտեր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**23.** Տրված է երեք դրույթ.

I. Ոչ մի ծովափնյա հանգստավայրում չկա մետրո:

II. Բոլոր այն բնակավայրերում, որտեղ գործարան է, կա մետրո:

III. Գագրան ծովափնյա հանգստավայր է:

*Որպեսզի եզրակացնենք, որ* ***Գագրայում գործարան*** ***<u>չկա</u>,*** *որպես նախադրյալ.*

ա) բավարար են I և III դրույթները:

բ) բավարար են I և II դրույթները:

գ) բավարար են II և III դրույթները:

դ) հարկավոր են բոլոր երեք դրույթները միասին:

ե) բավարար չեն տրված երեք դրույթները:

**24.** Արկղերում այնպես տեղավորեցին գրասենյակային իրերը, որ կատարվեց հետևյալ երկու պայմանը.

- Եթե առաջին արկղում կանաչ կամ դեղին (և/կամ այս երկու գույներով) տետրեր են դրված, ապա երկրորդ արկղում ջնջոցներ, իսկ երրորդում՝ սրիչներ են:
- Եթե երրորդ արկղում սրիչներ են դրված, ապա նույն արկղում պետք լինեն նաև մատիտներ:

Երրորդ արկղը բացելիս պարզվեց, որ.

- դրանում մատիտներ դրված չեն:

*Թվարկածներից **ո՞րն է բխում** տրված նախադրյալներից:*

ա) Առաջին արկղում դրված են կանաչ և դեղին տետրեր:

բ) Առաջին արկղում դրված են միայն կանաչ տետրեր:

գ) Առաջին արկղում դրված են միայն դեղին տետրեր:

դ) Առաջին արկղում ոչինչ չի դրված:

ե) Առաջին ակղում դրված չեն ո՛չ կանաչ և ո՛չ էլ դեղին տետրեր:

**25.** Նինոյի դիտարկմամբ, ձեռագործ իրը, գործարանային արտադրության իրի համեմատությամբ, ավելի թանկ արժե: Նրա համար ավելի կարևոր է ձեռագործ աշխատանքի ինչպես որակը, այնպես էլ ինքնատիպությունը: Դրա հիման վրա նա որոշեց՝ **միշտ նախապատվությունը շնորհել ձեռագործ իրերին՝ դրանց գործարանային արտադրության այլընտրանքների համեմատությամբ:**

*Ստորև թվարկածներից ո՞րն է **<u>կասկածի տակ դնում</u>** Նինոյի որոշման արդարացիությունը:*

ա) Ձեռագործ իրերը, որպես օրենք, պատրաստում են արվեստի այս կամ այն ոլորտում աշխատող մարդիկ, ովքեր աչքի են ընկնում նուրբ ճաշակով և այդ պատճառով մեծ նշանակություն են տալիս իրի գեղագիտական կողմին:

բ) Իրերը ձեռքով պատրաստելուն շատ ավելի երկար ժամանակ և ջանք է պահանջվում, քան գործարանային արտադրությամբ, քանզի յուրաքանչյուր մանրուքին՝ դետալին հատուկ ուշադրություն է դարձվում՝ ամեն մանրուք լավ մտածված է և մանրազնին մշակված:

գ) Ի տարբերություն գործարանային արտադրության, իրերը ձեռքով պատրաստելիս ավելի պակաս շեշտադրում է կատարվում որակի վերահսկման մեխանիզմների վրա:

դ) Ձեռքով աշխատելիս անհնար է ստեղծել երկու բացարձակապես նույնական իր, համապատասխանաբար յուրաքանչյուր ձեռագործ իր եզակի է, յուրաքանչյուրի վրա հեղինակի ձեռագիրն է:

ե) Ի տարբերություն գործարանային արտադրության, իրերը ձեռքով պատրաստելիս հնարավոր է օգտագործել առաջին հայացքից անօգուտ, հնացած նյութեր և նորաձև ապրանք ստեղծել:

# Նախադասությունների լրացում

*Տրված են նախադասություններ, որոնցում բաց են թողնված մի քանի բառեր: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծիկներով: Մի գծիկը երբեմն մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի բառ է նշանակում:*

*Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակ պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից շեղ (/) գծիկներով են սահմանազատված: Ընտրե՛ք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հաջորդաբար տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում, կստացվի իմաստով արդարացված նախադասություն:*

**26.** Եթե դուք ձեզ բնորոշում եք՝ որպես առանձնահատուկ բարեհաճ անձնավորություն, դա ——— որ ձեզանից ——— «բարեհահաճ» վարք ցանկացած կենսական իրավիճակում: ——— , հավանական է, որ ձեր բարեհաճությունը ——— տարբեր հանգամանքներում, ——— :

ա) նշանակում է ճիշտ այն, / սպասելի չէ / Ընդհակառակը / կարող է տարբեր լինել / չնայած դրանց հոգեբանական բնութագրիչներից

բ) չի նշանակում այն, / սպասելի է / Ավելին / տարբեր կլինի / ըստ դրանց հոգեբանական բնութագրիչների

գ) նշանակում է ճիշտ այն, / սպասելի է / Ավելին / տարբեր կլինի / չնայած դրանց հոգեբանական բնութագրիչներից

դ) չի նշանակում այն, / սպասելի չէ / Ճիշտ այդ պատճառով / տարբեր կլինի / ըստ նրանց հոգեբանական բնութագրիչների

**27.** Կայսրությունները, առևտուրը և համընդհանուր դավանանքները տարբեր մայրցամաքներում փաստորեն բնակվող բոլոր մարդկանց կուտակեց ներկայիս գլոբալ աշխարհում: Գլոբալային հասարակության ստեղծումը կարող է _____ լինել, _____ դա այն _____, որ գլոբալային հասարակությունը _____ լիներ, ինչպիսին այսօր է:

ա) բոլորովին էլ անխուսափելի չ / բայց / է նշանակում / ճիշտ այնպիսին չպետք է
բ) անխուսափելի / քանի որ / է նշանակում / ճիշտ այդպիսին չպետք է
գ) բոլորովին էլ անխուսափելի չ / քանի որ / չի նշանակում / այնուամենայնիվ այդպիսին պետք է
դ) անխուսափելի / բայց / չի նշանակում / այնուամենայնիվ այդպիսին պետք է

**28.** Գեղարվեստական ստեղծագործություններում ուշադրություն պետք է դարձնել այն բանի վրա, թե որքանով ——— դրանում նկարագրված պատմությունները: Ինքնին ______պատմվածքի հիմքը իրականությունն է, այն _____ այն պատճառով, որ անչափ_____:

ա) իրական են /ռեալիստական / ռեալիստական է/ վերափոխված են դրանում նկարագրված, օբյեկտիվորեն տեղի ունեցած պատմությունները

բ) իրական են / ֆանտաստիկ / ֆանտաստիկ է / իրական է դրա ֆանտաստիկությունը

գ) իրականությունից հեռու են / ֆանտաստիկ / ճշգրիտ արտացոլում է իրականությունը / իրական է դրա ֆանտաստիկությունը

դ) վերափոխված են գրողի երևակայության միջոցով / ռեալիստական / ճշգրիտ արտացոլում է օբյեկտիվ իրողությունը / հեռու է իրականությունից

**29.** Բրիտանիայի կողմից Հնդկաստանը գրավելու արդյունքում հարյուրավոր միլիոն հնդկացիներ դարձան երկարաժամկետ շահագործման զոհ: _____, շատ հնդկացիներ _____ յուրացրին այնպիսի արևմտյան գաղափարներ, ինչպիսիք են մարդու իրավունքները, և _____, երբ բրիտանացիները իրենց բացահայտ հայտարարված արժեքները _____ և Հնդկաստանի բնիկներին _____:

ա) Թեև / եռանդով / չնայած դրան, ազատության հույս տրվեց / մերժեցին / միայն Բրիտանայի հպատակության հավասար իրավունքներ շնորհեցին

բ) Համապատասխանաբար / ոչ մի կերպ չ/չնայած դրան, ազատության հույս տրվեց / հաստատապես պաշտպանեցին /ո՛չ Բրիտանիայի հպատակության հավասար իրավունքներ և՛ոչ էլ՝ անկախություն շնորհեցին

գ) Համապատասխանաբար / ոչ մի կերպ չ/ այդ պատճառով հուսաթափություն ապրեցին / հաստատապես պաշտպանեցին / Բրիտանիային հպատակության և՛ հավասար իրավունքներ և՛ նաև անկախություն շնորհեցին

դ) Թեև / եռանդով / այդ պատճառով մեծ հիասթափություն ապրեցին / մերժեցին /ո՛չ Բրիտանիայի հպատակության հավասար իրավունքներ շնորհեցին և՛ ոչ էլ՝ անկախություն

## Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

*Ուշադրությամբ ընթերցե՛ք և վերաիմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:*

*Այս կամ այն հարցին պատասխանելու համար հնարավոր է անհրաժեշտ լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմելով»:*

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

I Իտալացի նկարիչ և գիտնական Լեոնարդո դա Վինչին դիտարկման միջոցով ուսումնասիրում էր թռչունների թռիչքի առանձնահատկությունները: Մեզ հասել են նրա ուրվանկարներն ու դիտողությունները, որոնք վերաբերում էին թռչող սարքին: Նա առաջինն էր, որ մեզ տվեց թռիչքի տեսական հիմնավորումը, օդից ծանր սարքերի (ուղղաթիռ, պարաշյուտ) ստեղծման գաղափարը: Լեոնարդոն ունի այսպիսի ասացվածք. «Թռչունը մի տեսակ սարք է, որի շարժումը ենթարկվում է մաթեմատիկայի օրենքներին: Հետևաբար, մարդը պետք է կարողանա այդպիսի սարք ստեղծել»: Նրան է պատկանում նաև մի գրառում. «Գնացեք Միլանի բերդ-ամրոցի մոտերքում գտնվող փոսերը՝ ճպուռների թռիչքը դիտելու համար»: Այդ խոսքերից մի քանի դար անց ճպուռների թռչելու սարքի ուսումնասիրությունը բացահայտեց մի այնպիսի գաղտնիք, որը շատ կարևոր դարձավ ավիացիայի հետագա զարգացման համար:

II Հայտնի է, որ բնությունը թռչնի կամ միջատի թռչող սարքը «կառուցում» էր տևական ժամանակ: Գոյություն ունի որոշակի հարաբերակցություն թռչնի մարմնի կշռի և թևերի բացվածքի միջև: Տարբեր թռչունների համար որոշված է նաև թևերի թափահարումների հաճախականությունը: Օրինակ՝ արագիլը, որի թևերի բացվածքը գրեթե 3 անգամ գերազանցում է մարմնի երկարությանը, մեկ վայրկյանի ընթացքում թևերը թափահարում է մեկ անգամ, մինչդեռ փասիանը, կաքավը, լորը, որոնց թևերի բացվածքը 1,5 անգամ է գերազանցում է մարմնի երկարությանը, մեկ վայրկյանում թևերը թափահարում են 5 անգամ:

III Թռչունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ մարմնի իսկայական չափը նրանց համար «տնտեսող չէ» : Մարմնի չափի չափազանց մեծացումը պայմանավորում էր իսկայական մկանային համակարգի և կմախքի զարգացում, համապատասխանաբար պահանջում էր ավելցուկային սնունդ, որն ինքնըստինքյան հեշտությամբ ձեռք չէր բերվում: Պետք է նշել նաև այն թերությունը, որը բնորոշ է որոշ մեծ չափսի թռչուններին: Կռունկները չեն կարող թռչել տեղից: Նրանք թռչում են միայն գետնին մի քանի տասնյակ քայլեր վազելուց հետո: Որոշ թռչուններ սկսում են թռչել ծառերի ճյուղերից կամ ժայռերից: Չնայած դրան, թևավոր կենդանիները իրենց կշռի համեմատ ավելի քիչ էներգիա են սպառում, քան մարդու կողմից ստեղծված սարքերը:

**Անցնել հարցերին.** 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

IV Անցյալ դարի 30-ական թվականներին հաճախ էին տեղի ունենում օդային աղետներ: Գիտնականները ուսումնասիրեցին ավիավթարների հետևանքով քայքայված ինքնաթիռի բեկորները, որոնց վրա հրդեհի կամ պայթյունի հետքեր չհայտնվեցին: Պարզվեց, որ ավիավթարը ինքնաթիռի սխալ կոնստրուկցիայի արդյունք էր: Ինքնաթիռի կողմից որոշակի արագություն գերազանցելուց հետո աերոդինամիկ ուժերի գործողությամբ սկսվում էր ինքնաթիռի թևի տատանողական շարժում, ճռոց և փլուզում: Այս երևույթը անվանեցին «ֆլատեր» (անգլ. թրթռոց):

V Տարօրինակ է, բայց փաստն այն է, որ ժամանակակից ինքնաթիռները ավելի շատ ընդհանրություններ ունեն միջատների հետ, քան թռչունների: Ճպուռների թռիչքային սարքի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այս միջատներն իրենց թևերի եզրերին ունեն կոշտացումներ, որոնց նշանակությունը, ըստ երևույթին, պետք է լինի միջատի թևի ծանրացում և վիբրացիայի՝ թրթռոցի կանխում: Ավիակոնստրուկտորները օգտվեցին այդ հայտնագործությունից և ինքնաթիռի թևերը ավելի ծանր դարձրին, այդպիսով վերացնելով ֆլատերի՝ թրթռման վտանգը:

VI Ժամանակակից ռեակտիվ թռչող սարքերի արագությունը զգալիորեն գերազանցում է ցանկացած կենդանի էակի արագությանը: Ուղևորատար ինքնաթիռը 25 անգամ ավելի արագ է թռչում, քան ճպուռը, և 90 անգամ ավելի արագ, քան թիթեռը: Սակայն պարզվեց, որ ինքնաթիռը մեկ ժամում անցնում է իր երկարությանը 15 000 անգամ գերազանցող հեռավորություն, իսկ, ասենք, բզեզը (միջատի տեսակ)՝ իր երկարությանը մեկ միլիոն անգամ գերազանցող հեռավորություն:

**Անցնել հարցերին.** 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**30.** I պարբերության համաձայն, Լեոնարդո դա Վինչին.

ա) առաջինն էր, որ մեզ տվեց թռիչքի տեսական հիմնավորումը և ստեղծեց օդից ծանր սարքեր. ուղղաթիռ, պարաշյուտ:
բ) ուսումնասիրեց թռչունների թռիչքի առանձնահատկությունները և թռչունի թռչող սարքը ենթարկեց մաթեմատիկական օրենքներին:
գ) մատնացույց արեց կենդանի բնության մասին առկա գիտելիքի կիրառմամբ ինժեներական խնդիրներ լուծելու հնարավորությունը:
դ) բացահայտեց մի այնպիսի գաղտնիք, որը շատ կարևոր դարձավ ավիացիայի հետագա զարգացման համար:

Վերադարձ տեքստի I էջին
Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**31**. Ի՞նչ հարաբերակցության մասին է խոսվում II պարբերությունում:

ա) Որքան ավելի երկարատև ժամանակընթացքում է բնությունը «կառուցում» թռչնի թռչող սարքը, այնքան ավելի մեծ է նրա թևերի բացվածքը և այնքան փոքր է թևերի թափահարման հաճախականությունը:

բ) Որքան ավելի մեծ է թռչնի մարմնի կշիռը, այնքան ավելի մեծ է նրա թևերի բացվածքը և այնքան բարձր է նրա թևերի թափահարման հաճախականությունը:

գ) Որքան ավելի երկար է թռչնի մարմնի երկարությունը, այնքան ավելի փոքր է նրա թևերի բացվածքը, բայց այնքան մեծ է նրա թևերի թափահարման հաճախականությունը:

դ) Որքան անգամ ավելի է գերազանցում թևերի բացվածքը թռչնի մարմնի երկարությանը, այնքան ավելի փոքր է նրա թևերի թափահարման հաճախականությունը որոշակի ժամանակահատվածում:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**32.** Տեքստում ուշադրությունը կենտրոնացած է խոշոր չափսի թռչուններին բնորոշ թերության վրա: Թվարկածներից ո՞ր նախադասությունն է դա  արտահայտում:

ա) Խոշոր  չափսի թռչունները իրենց կշռի համեմատությամբ  շատ ավելի քիչ էներգիա  են ծախսում,  քան մարդու կողմից ստեղծված սարքերը:

բ) Որոշ խոշոր թռչուններ կարող են թռչել միայն գետնի վրա մի քանի քայլ վազելուց հետո:

գ) Կռունկները թռչել  սկսում են ծառերի ճյուղերից այն դեպքում,  երբ որոշ ռազմական ինքնաթիռ կարող է թռչել կանգնած դիրքից:

դ) Ավելի սնունդ հայթայթելու համար խոշոր չափսի թռչուններին հարկավոր է  հսկայական  մկանային համակարգ:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**33.** Ո՞ր թռչող սարքերի ավիավթարների մասին է խոսվում տեքստում:

ա) Սխալ նախագծված թռչող սարքերի, որոնք չափազանց ծանր թևեր ունեին:

բ) Ժամանակակից ռեակտիվ թռչող սարքերի, որոնք 90 անգամ ավելի արագ են թռչում, քան թիթեռները:

գ) Ինքնաթիռների, որոնք անցյալ դարի 30-ական թվականներին հրդեհի պատճառով հաճախ պայթում էին:

դ) Թռչող սարքերի, որոնց թևերի վիբրացիաները՝ թրթռումները առաջացնում էին ամբողջ սարքի փլուզում:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

**34**. Տեքստի համաձայն, ինչի՞ հիման վերացվեց ֆլատերի՝ թրթռոցի վտանգը:

